

է, չենք գործածում. ուրիշից մուրալով ենք գրադուած: Մենք ձգտում ենք հայուն եւրոպականացնել, այս գովելի է: Բայց մենք չուիայ հագնողի գլխից փափախը վերցնելով՝ անզը գնում ենք շապո. այս ծիծաղելի է: —

Ո՞ր դէպ. պ. Արեղեանը շատ հիմնաւոր կերպով ցոյց է տուել թէ այո՛ւ այո՛ւ, այն՝ զերանունները մենք նա զերանուան պէս հոլովելով, մեծամեծ հոմոթիւններ ենք առաջացնում մեր լեզուի մէջ. այժմ՝ պ. Վանցեանցը խոստանում է ապացուցանել թէ այդ բանով հոմոթիւնի երկդիմութիւն չի առաջ գալիս: Եթէ այդ ապացոյցը ապո՛ւ նա մեծ ծառայութիւն մատուցած կը լինի: Երանի թէ չմոռանայ խոստումը:

Ս. Ս.

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Սառ յիշողութեան օրինակներ. — Պատմութեան մէջ յայտնի են արտասովոր յիշողութեան տէր անձանց շատ օրինակներ: — 1801 թուին Աետերնում մի տղայ կար, որ ոչ միայն ծայրէ ի ծայր անգիր գիտէր Աստուածաշունչ սուրբ գիրքը, այլև կարող էր մէջերբից, ինչ ուզենային, ասել անսխալ գիտէր նաև զոցա տեղերը, ինչպէս և իւրաքանչիւր գրքի գլուխներն ու տների քանակութիւնը: — Պոնտոսի թագաւոր Միհրդատը, որ մեռել է Ք. ծ. 63 տարի առաջ իւր 80,000 զինուորներից իւրաքանչիւրի անունը գիտէր: — Վեսարն ու Վիրտուր նոյնպէս կարող էին իրենց զօրքի ամէն մի զինուորի անունն ասել: — Սենեկան, որ Ք. ծ. 38 տարի առաջ է մեռել, կարող էր 2000 խօսք նոյն կարգով կրկնել, ինչ կարգով ասէին նորա առաջ: — Հուգօ — Հորացիոսը՝ «միջազգային իրաւունք» կոչուած գիտութեան հիմնադիրը, որ մեռել է 1645 թուին Ռոստոկում՝ ներկայ լինելով Քրանսիայում մի քանի գունտ զինուորների զօրահանգիսին, յիշում էր այն բոլոր զինուորների անունները, որոնք մասնակցում էին հանդիսին: — Հռչակաւոր Լէյքնից փիլիսոփան, որ ծնուել է 1646 թուին Լայպցիգում և մեռել 1716-ին Հաննովերում, անգիր գիտէր Վերգիլիոսը՝ մինչև անգամ խորին ծերութեան հասած ժամանակը: — Անգղիացի նշանաւոր վարչական գործիչ Ժ. Էմս — Փոկսի համար ասում էին, որ եթէ Աստուածաշունչը կորչելու լինի, նրա խօսքերով կարելի կլինի վերականգնել: — Քրանսիացի մատենագիր Ռասինը,

որ մեռել է 1699 թուին Պարիզում, անգիր գիտէր ամբողջ Լուրդիգէտը. Բէյլը, որ մեռել է 1706-ին, ամբողջ Մոստէրը. Գնօն՝ ամբողջ իրաւարանական օրէնքների ժողովածուն. Մեատաստացիօն, որ մեռել է 1782-ին՝ ամբողջ Հորացիոսը. իսկ Քրանսիացի ճանապարհորդ Պարանթան՝ ամբողջ Նոր Ատակարանը: — Նոյնքան հռչակ ունին և՛ Գեօտինգէնի ուսուցչապետ Բրենտէլը, որ կարող էր անգիր ասել ամբողջ Կլիսկանը սկզբից մինչև վերջը և ընդհանրապէս, և Փոն. Աստեցը, որ բաւական էր միայն երկու անգամ լսէր միևնոյն բեմական գրուածքը, որպէս զի կարողանար բառացի կրկնել առաջին տեսարանից մինչև վերջինը. Սակայն ամենից աւելի սուր յիշողութիւն ունէր Սան-ժերմէնը, նա թուեր միայն պահելու մի այնպիսի սուր յիշողութիւն ունէր, որ կարող էր կարգով հազար թիւ միայն պահել, 1574 թուին Պրահայի մէջ Հենրիկոս Գ-րդի պալատում նա մի այնպիսի խաղ խաղաց, որ ընդհանուր զարմանք պատճառեց, նա պատուիրեց հարիւր ձեռք խաղաթուղթ բերել և խնդրեց թագաւորին ու նրան շրջապատողներին, որ խառնեն 3200 թղթերը և կարգով ասեն իրեն: Նա ուշի ուշով գրի առաւ նրանց ասածները և յետոյ՝ առանց մի որևէ շնչին սխալ անելու, կրկնեց բերանացի բոլորը:

\* \* \*

Երկրագնիս ընակի լեռի յիւր. — Եւրոպական թերթերից մէկը հետևեալ հետաքրքիր տեղեկութիւններն է տալիս երկրագնիս ընակիչների մասին:

Աշխարհիս բոլոր ընակիչների թիւը 1,200 միլիոն է, մարդ ու կին հաւասար շախով, նորա խօսում են 3064 լեզուով և դաւանում են մինչև 1000 կրօն. Տարեկան մեռնում են 35,214,000 հոգի, իսկ ծնում 36,792,000, այնպէս որ տարին 1 1/2 միլիոնով մարդիկ աւելանում են, Կեանքի միջին հասակը 38 տարուց չի անցնում. համարեա 25 0/0 մեռնում են 17 տարեկան. Ամուսնացած և աշխատաւոր մարդիկ աւելի երկար են ապրում քան ամուրիներն ու անգործները: Քաղաքակրթուած ազգերի կեանքի միջին տարիքն աւելի երկար է քան վայրենիներիը:

\* \* \*

Կին ներսուսի. — Մօտ օրերս մշտական ընակութիւն հաստատելու համար Բարցելոնա քաղաքն է եկել Մարիա — Լուիզա Ինիգօ անունով մի կին, որը յայտնի է «di Punta brava» մականունով: Տեքով այդ կնոջ կարելի է 70 տարեկան համարել, այն ինչ նա միայն 39 տարեկան է: Ինչպէս վայել է մի Բարսելոնացու, Մարիա — Լուիզա Ինիգօն Կուրայի Hyo Colorado դաստակերտում քաջութեամբ պաշտպանում էր, երբ ապստամբները Կուինտին Բանդերայի առաջնորդութեամբ յարձակուեցան նրա վրայ: Թշուառ կնոջ աչքի սառն սպանեցին մարդուն ու որդուն: Ապստամբները ստիպում էին



նրան, որ ազադակէ. «Անցցէ՛ ապա Պուրան, սակայն հպարտ Իսպանոսին կրկնում էր շարունակի «Անցցէ Իսպանիան», կատաղած պատասխանները փորեցին նրա աչքերը. պոկեցին ականջները, երբ ուզում էին ազամանդեայ գնդերն հանել. կտրեցին ձեռքի երկու մատը, որովհետև մատաները չէին դուրս դալիս մատներից: Աւ վերջապէս 15 զնգակով գետին փակեցին թշուառ կնոջը, Ամբողջ 36 ժամ անզգայ ընկած էր նա վերաւորների ու մեռածների հետ պատերազմի դաշտում: Բարեբախտաբար այդ տեղից անցաւ իսպանական մի գունտ, նկատեցին նրան ու տարան հիւանդանոց, որտեղ 11 ամիս պաակեց, կեանքի ու մահուան հետ կռուելով. Այժմ՝ Վորիա Ինիգոն տեղափոխուել է Բարցելոնայ, որտեղ նա կստանայ մի փոքրիկ կենսածաշկ իր հազուադիւս քաջատուութեան համար:

\* \*

Լսնդոնի գիւր. — Լսնդոնի գիւրը այնքան մեծ է, որ եթէ հարկ լինէր Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքը գնել, դորա համար աշխարհիս հարստութիւնը բաւական չէր լինի:

Wonsin Hanule ը, քաղաքագլխի բնակարանը, 20 միլիոն ֆրանկ արժէ, Սակարանը և այն հրապարակը, որի վերայ այդ հաստատութիւնն է հիմնուած, միասին 40 միլիոն են գնահատուել, իսկ կենտրոնական նամակատան շինութիւնը 50 միլիոն: Անգլիական Տոպերում 35 միլիոնի ազամանդ և ուրիշ թանկագին քարեր կան, Սուրբ Պողոսի տաճարը, Աեստմիստրի արքայութիւնը և աղգային ժողովի պալատները միլիարդից (1000 միլիոն) աւելի արժեն, Թանգարանները, որտեղ հազուադիւս հնութիւններ կան դիզուած դարերով, միլիարդներ արժեն, եթէ միայն այդ տեսակի ժողովածուները կարելի է ոսկու կշռով չափել, Թանգայի հատաքարի փերը մտ մի միլիարդ փող են նստել, ելեքտրոլին 300 միլիոն, իսկ կոյուղիները 500 միլիոն, Լսնդոնի առանձին անշարժ կալուածները մինչև 770,000 հատ են հաշուում, որոնք 35 միլիարդ ֆրանկ արժեն, Այս բոլոր անշարժ կալուածները մի քանի լորդերի են պատկանում, որոնց մէջ առաջին տեղը պէտք է Աեստմիստրի դքսին տալ:

\* \*

Իսպանական նոր նաւակառններ. — Իսպանական կառավարութիւնը, որպէս զի կարողանայ երկրի եկամուտները շատից քչից աւելացնել և Պուրայի պատերազմից յառաջացած ծախսերը ծածկել՝ նոր, այսպէս կոչուած, սգի նամականիշներ է հրատարակել տուել: Այդ սև նամականիշների վրայ սպիտակ գրերով տպուած է. «1893-1899 թուի պատերազմի մաքս գինն է 2 կոպէկ», Իսպանիայում ամէն մարդ նամակ ուղարկելիս, բացի սովորական նամականիշից, պարտական է մի հատ էլ այս սգի նամակներից կոպտել, Այս պարտադիր նամականիշներից զատ, հրատարակուած են և «հայրենասիրական» կոչուածները, որոնք պարտադիր չեն, Սրանց գինը 1 կոպէկ է և իւրաքանչիւր Իսպանացի, եթէ մի որևէ

իցէ ոչնութիւն է ուղում հասցնել իւր հայրենիքին, կարող է մէկը և կամ մի քանիսը կոպտել իւր նամակին. Մ. Ն.

\* \*

Տարապանութեան նոր գիտեր. — Մթնոլորտի մէջ մի նոր տարր է գտնուած, Ինչպէս յայտնի է վերջին ժամանակներս միջոց են գտել մթնոլորտը խրատելու, որ շատ մեծ նշանակութիւն ունի գիտութեան մէջ և անշուշտ արդիւնաբեր պէտք է լինի զանազան տեսակետներով. Այդ միջոցաւ և ուրիշ փորձերով երկու գիտնականներ՝ Վ. Մազզէ և Մ. Տրապէր եկան այն եզրակացութեան, որ մթնոլորտի մինչև այժմ ծանօթ տարրերից զատ մի ուրիշ զաղ ևս կայ, որ իւր յատուկ լուսապատկերն ունի, նոր զազը ստղծից աւելի ծանր է և պակաս ցնդական քան բորակածիւր, թթուածինը և արգոնը, Երկու տեսակարար ջերմութեանց համամասնութիւնից երևում է, որ միահիւլէ է այդ զազը և մի նոր տարր է ներկայացնում, Յիշեալ գիտնականներն առաջարկում են եթէ այս եզրակացութիւնը հաստատուի՝ krypton (թագուն) անուանել նոր տարրը և նորա տարրաբանական նշանը Kr գնել, Հարկաւ անկարելի է զեռ ճշգիւ որոշել, թէ ինչ տեղ պէտք է բռնէ այս նոր տարրը պարզ մարմինների ցանկի մէջ:

— Երկրորդ գիտը նոյնպէս տարրաբանութեան ճիւղն է վերաբերում, Պարոն և Տիկին Պիւրի Բրէմոնի աշխատակցութեամբ, մի քիմիական նիւթ են գտել, որ անուանել են սպիրտ, փորձերը ցոյց են տալիս, որ սրտանիւթ կոչուած նիւթից 900 անգամ աւելի աղու շերտործութիւն ունի սալուսանկարչական տպարարութեանց վրայ և հազիւ կէս րոպէի մէջ տեղի է տալիս:

— Մթնոլորտի բազադրութիւնն ստուգելը շատ կնճառ խնդիր է, Բացի սուրճի, մեսարգուն, եսնի և կրեոնի զաղերից՝ վերջերս գտել են որ ոգի մէջ ջրածին ևս կայ և ոչնչափ վնասակար չէ շնչառութեան, Ա. Կոտիէ գիտնականը զեկուցեց է Ֆրանսիական Ակադեմիային, որ մեծ քաղաքներում օդը համեմատաբար մեծ չափով բնածխային թթուաններ է պարունակում, որովք վտարաններից են յառաջ դալիս, Հետաքրքրական կլինէր այդ կողմից Բագուի մթնոլորտը հետազոտել, Բնականաբար այդ թթուաններն ամէնից քիչ են ծովերի վրայի օդի մէջ, ուր 100 լիտր օդը պղնձի թթուուկի վերայից անցնելով մի տասնհարարերորդ գրամ թթուան է տալիս, Արմեն գիտնականը ջրածնի գոյութիւնը նշմարել է նոյն իսկ այդպիսի օդի մէջ, որի 100 լիտրը 11.ից մինչ 18 խորանարդ սանտիմետր ջրածին է տալիս: \* Արմեն ազատ ջրածինը մասնակցում է մթնոլորտի տարրերին և նորա ծաւալը նոյնքան օդի մէջ գտնուած բնածխութեան փոխարէն է համապատասխան:

\* Մեկ այս սեղեկութիւններն անկ լեկ զանազան սեղեկից թայց միզ քուտու է յի քրածնի քանակութիւնը ցոյց տուող քուտը սխալ են, սուղիստ երկ Օ սասիման ջերմութեան եւ 760 միլլիմետր ճնշողութեան ակ մի յիս քրածնի ծանրութիւնը 0.08988 գրամ է, իսկ նոյնիսն բնածխային բրուաքի ծանրութիւնը 1.9774 գրամ՝ վերոյիշեալ կամեմատութիւնը պակերով, քրածնի ծաւալը 25 միլլիմետր է երեսում: Գ. Ն.